ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ **«Շարադրություն և փոխադրություն գրելու մեթոդիկայի մշակումը»**

Կազմեց՝ **Սաթիկ Պողոսյան**

Ագարակի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝**Լուսինե Սողոմոնյան**

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն ---------- 1
Ներածություն ---------- 2
ԳԼՈՒԽ I :Շարադրություն գրելու մեթոդիկա---------- 3
1.1 Գաղափար շարադրության մասին---------- 3
1.2Շարադրության տեսակները ---------- 4
ԳԼՈՒԽ II:Փոխադրություն գրելու մեթոդիկա---------- ---------- 14
2.1Գաղափար փոխադրության մասին---------- 14
2.2Փոխադրության տեսակները---------- 15
ԳԼՈՒԽ III:Շարադրության և փոխադրության ստուգումն ու քննարկումը --- 21
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 22
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ---------- 23

Ներածություն

<<Մեր բարոյական պարտականությունն է յուրաքանչյուր երեխայի հնարավոր լավագույն կրթություն տալը>> Դեսմոնդ Տուտու

Հայոց լեզվի դասընթացի հիմնական նպատակներից է աշակերտների մեջ անսխալ գրելու և մտքերը գրավոր արտահայտելու հմտությունը:

Որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի՝ իմ առջև խնդիր եմ դրել կիրառել մի քանի ժամանակակից մեթոդներ, որոնցով կխթանեմ,որ աշակերտի և՝ գրավոր, և՝ բանավոր խոսքը հավասարապես հարստանա ու զարգանա:

Բանավոր խոսքի համեմատ գրավոր խոսքը լավագույնս կձևավորվի միայն նպատակաուղղված ուսուցման ճանապարհով: Գրավոր խոսքի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները պետք է կատարելագործել ուսուցման ողջ ընթացքում:

Իմ հետազոտության նպատակն է դիտարկել հայոց լեզվի և գրականության ժամերին աշակերտների ստեղծագործական ունակությունները զարգացնելու հնարավորությունները,զարգացնել բառապաշարը,կապակցված խոսք կառուցելու ունակությունները,զարգացնել երևակայությունը, վերապատմելու կարողությունները: Հետազոտական աշխատանքում քննարկվում են շարադրությունների և փոխադրությունների տեսակները և դրանց գելու մեթոդիկան: Ցանկացած գրավոր խոսքի տեսակ ունի իր մեթոդական շղթան և շատ կարևոր է ուսուցման գործընթացում պահպանել այդ մեթոդական շղթայի հերթականությունը:

Ներկա աշխատանքում փորձել եմ ներկայացնել աշակերտի գրավոր խոսքի ուսուցման մեթոդիկան: Այս թեմայի շրջանակում կքննարկենք գրավոր խոսքի 2 տեսակները՝ փոխադրություն և շարադրություն:

§Սովորական ուսուցիչը պատմում է: Լավ ուսուցիչը բացատրում է: Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս: Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է¦:

ՈՒԻԼՅԱՄ ՈՒՈՐԴ

ԳԼՈՒԽ I :Շարադրություն գրելու մեթոդիկա
1.1 Գաղափար շարադրության մասին

Շարադրության դերը գրավոր խոսքի մեջ մեծ նշանակություն ունի ինչպես ուղղագրական, այնպես էլ քերականական օրինաչափությունների կիրառման տեսակետից:Շարադրությունը տրված թեմային համապատասխան սեփական գիտելիքների,մտքերի գրավոր շարադրումն է:Շարադրությունը սովորեցնում է իր խոսքերով ճիշտ շարադրել սեփական մտքերը:Որևէ ամբողջական նյութի շարադրումն իրենից ներկայացնում է խոսքային գործունեության 2 տեսակների՝ մտածելու(ներքին խոսք) և մտածածն արտահայտելու՝ շարադրելու (արտաքին խոսք) համակցում:Մտքում ծրագրվածի հիման վրա տեքստի ստեղծումը իրականանում է պատմելու և պատմածը գրավոր շարադրելու գործընթացներով, որոնք կատարվում են իմաստավորում -→ հիշողության մեջ մտապահում-→ վերարտադրություն ընթացքով:

Շարադրությանը նախապատրաստվելու հիմնական քայլերն են՝
- նյութի հավաքում, մշակում,
- մտքերի հաջորդականության որոշում,
- օգտագործող բառերի ուղղագրության ճշտում,
- քերականական օրինաչափությունների կրկնում
- հարցաշարի կազմում:

Շարադրություն գրելիս պետք է օգտվել նաև հետևյալ հուշագրերից.

1.Շարադրությունը պետք է համապատասխանի թեմային և բացահայտի այն;

2.Տեքստը պետք է շարադրվի կուռ բովանդակությամբ,համառոտ,նույն ոճով և գրագետ:

3.Շարադրության մեջ բառերը պետք է օգտագործվեն ճիշտ նշանակությամբ:

4.Պատմելու ոճը պետք է լինի ինքնատիպ և արտահայտիչ:

5.Շարադրության մեջ ներկայացված մտքերը պետք է շարադրել ճիշտ հերթականությամբ:

Շարադրություն գրելու կանոնները

- Վերնագիր
  Ցանկացած շարադրություն պետք է ունենա վերնագիր,որը պետք է լինի տարողունակ,այսինքն՝արտացոլի ամբողջ շարադրության բովանդակությունը:

- Ներածություն
  Նախընտրելի է ընթերցողին միանգամից չտեղափոխել դեպքերի հորձանուտը:Դրան պետք է նախապատրաստել աստիճանաբար:

- Հիմնական մաս
  Ներածությունից հետո պետք է սահուն անցում կատարել հիմնական ասելիքին:
- Վերջաբան
  Վերջաբանը պետք է լինի շատ խոսուն,համառոտ մտքերով և ընդհանրացնի ամբողջ գրվածը:

Շարադրություն գրելը մեծապես նպաստում է աշակերտի անհատականության զարգացմանը:Դա դրսևորում է ինչպես շարադրվող նյութի նկատմամբ նրա ցուցաբերած ինքնուրույն վերաբերմունքի,այնպես էլ ստեղծագործական շարադրությունների լեզվի և ոճի մեջ:Շարադրությունը աշակերտի մեջ մշակում է խոսքի կուլտուրա,ձևավորում է նրա լեզուն ու ոճը,իսկ դա լեզվի ուսուցման հիմնական խնդիրներից մեկն է: Շարադրություն գրելիս աշակերտը սովորում է թեմաների, բառերի,արտահայտությունների, նախադասությունների ու ոճերի մեջ ընտրություն կատարել, մտքերը համակարգել, տրամաբանական կապն ու հաջորդականությունը ճիշտ պահպանել, ինքնուրույն վերլուծություններ ու համադրություններ կատարել, էականը երկրորդականից տարբերել: Աշակերտները, հաճախակի շարադրություններ գրելով, զարգացնում են իրենց նկարագրական, բանավոր և գրավոր խոսքը, զարգացնում են ստեղծագործական մտքի կարողությունը, ազատորեն արտահայտում են իրենց միտքն ու զգացմունքները, կարծիքն ու տպավորությունները, կիրառում են նորածանոթ բառերը և հարստացնում իրենց բառապաշարը:

1.2 Շարադրության տեսակները

Շարադրության հիմնական տեսակներն ուսուցանվում են նաև տարրական դասարաններում, իհարկե, կրտսեր դպրոցականների տարիքին ու զարգացման մակարդակին համապատասխան: Ահա հենց այդ աշխատանքն է, որ շարունակվում,խորացվում ու ընդլայնվում է միջին դասարաններում:

Շարադրությունը լինում է 2 տեսակ ստեղծագործական կամ ազատ և վերլուծական (գրական երկի):

Ստեղծագործական կամ ազատ շարադրութուն

Ստեղծագործական շարադրությունները կարևոր դեր են խաղում աշակերտների գրավոր և բանավոր խոսքի զարգացման,նրանց գեղագիտական ճաշակի բարձրացման,խոսքի մշակույթի կատարելագործման գործում:Ստեղծագործական են կոչվում այն շարադրությունները,որոնց մեջ աշակերտը որևէ բան ինքն է ստեղծում՝ ավելացնում,փոփոխում կամ իր որոշակի վերաբերմունքն է ցույց տալիս նկարագրվող դեպքերի ու դեմքերի նկատմամբ:Ստեղծագործական բնույթի շարադրության համար նյութ կարող են ծառայել աշակերտի անձնական կյանքը,շրջապատը,հասարակական,քաղաքական կյանքը:Ազատությունը սահմանափակվում է միայն նրանով,որ հանձնարարվում է թեմայի վերնագիրը /ասենք՝«Գարունն իմ սենյակի պատուհանից»,«Ծառատունկ» <<Հայրենի լեռներ>> և այլն:

Ազատ շարադրությունները կարող են լինել՝

Բնութագրական /ասենք՝ որևէ կոնկրետ մարդու՝ մոր, ուսուցչի, ընկերոջ կամ որևէ արվեստի կամ արվեստագետի՝ նկարչի, դերասանի, երգչի բնութագրություն/:

Բնութագրական շարադրության նախապատրաստման համար ևս մեծ կարևորություն ունեն դիտումն ու ուսումնասիրումը:Դիտումը կատարվում է բնութագրվող անձի հետ անմիջական շփման ժամանակ՝ նրան տեսնելիս, լսելիս, նրա հետ խոսելիս, զբաղվելիս:Ուսումնասիրման ժամանակ բնութագրվող անձի վերաբերյալ տեղեկություններ են հավաքվում զանազան աղբյուրներից: Դիտումն ու ուսումնասիրումը ավարտելուց հետո աշակերտները դասարանում ուսուցչի ղեկավարությամբ ամփոփում, ամբողջացնում են բնութագրվող անձի վերաբերյալ ձեռք բերած տվյալներն ու տեղեկությունները, ապա նրա շուրջ գրում բնութագրական շարադրություն:Ուստի նմանօրինակ բնութագրական շարադրու-թյուններն ունենում են խոսուն վերնագրեր,օրինակ՝ <<Մեր սիրելի ուսուցիչը>>, <<Ընկերուհուս դիմանկարը>>, «Մեր դպրոցի բակը գարնանը» և այլն:

Նկարագրական /ասենք՝ մայրամուտի, արևածագի, լուսամուտից երևացող տեսարանի, բնաշխարհի մի անկյան նկարագրություն/:

Նկարագրական շարադրություն գրելու համար աշակերտները պետք է ուշադիր և մանրամասն դիտեն իրենց շրջապատը,առարկաներն ու երևույթները,նկատեն բնության փոփոխությունները:Այդ ամենը գեղեցիկ ու արտահայտիչ վերարտադրելու,նկարագրելու համար սովորողները պետք է օգտագործեն համապատասխան,զանազան համեմատություններ ու փոխաբերություններ:

Նկարագրությունը սովորեցնում է աշակերտներին առավել դիպուկ բառերի ընտրություն,շարադրանքի հաջորդականության պահպանում,իր գիտելիքների բառային ճիշտ ձևակերպում:Դիտումների հիման վրա գրված շարադրությունները լինում են մեծ ծավալի,որովհետև երեխաները ունեն շատ նյութ: Այդպիսի շարադրության թեմաները ևս պետք է լինեն հստակ ու կոնկրետ, օրինակ՝ <<Աշնանն այգում>>, <<Անտառում>>, <<Վաղ գարուն>> և այլն:

Վերաբերական /ասենք՝ կարծիք շրջապատում կատարված որևէ դեպքի, կոնկրետ անձնավորությունների արարքների մասին/:

Կան նշանավոր ու անվանի մարդիկ,որոնց կատարած արարքների, նրանց շուրջ կատարված դեպքերի մասին կարելի է հանձնարարել վերաբերական բնույթի շարադրություններ;Այսպիսի շարադրությունները ավելի հետաքրքիր է ու ոգևորող ,ինչպես օրինակ,<<Խոհեր զինվորի հուշարձանի առաջ>> , <<Մի անգամ դասամիջոցին>> և այլն:

Հուշագրական /անմոռաց, տպավորիչ դեպքեր իր կյանքից/: Հուշագրական շարադրության մեջ նկարագրվում է իրադարձություն ականատեսի կամ մասնակցի կողմից: Նկարագրվող դեպքերը դիտվում են իբրև փաստեր:Այսպիսի շարադրության թեմաններ կարող են լինել օրինակ՝ <<Իմ առաջին ուսուցիչը>>, << Ծիծեռնակաբերդի ճանապարհին>>, <<Իմ կյանքի ամենաերջանիկ օրը>> և այլն:

Դատողական / ասենք պարունակում է պնդում որևէ առարկայի բնույթի վերաբերյալ կամ պետք է փաստերով ապացուցի իր առաջ քաշած դրույթի ճշմարտացիությունը/;

Դատողական շարադրությունը աշակերտի մեջ զարգացնում է ակտիվ ստեղծագործական միտք, ինքնուրույն մտածելու և դատելու կարողություն: Դատողական շարադրություններ կարելի է գրել սովորողների ծգտումների, երազանքների,մասնագիտությանընտրության,ինչպես նաև հայրենասիրության, հերոսության, աշխատասիրության, բարեկամության շուրջ:

Այսպիսի շարադրության թեմաներ կարող են լինել օրինակ՝ Հարկավոր է մարդ լինել, Իմ սիրած արվեստագետը:Նաև թեմաները կարող են լինել գրականությունից ուսումնասիրված ստեղծագործությունների հիման վրա:Ինչպես օրինակ՝<<Ոսկի երիտասարդություն>>, <<Միքայելի վերածնունդը >>և այլն:

Գրական/վավերագրական կամ հորինովի պատմություն, որի թեման կարող է և° ինքնուրույն ընտրվել, և° հանձնարարվել/:

Այս բնույթի շարադրություններում մեծ տեղ է տրվում հորինվածքին:Աշակերտը վերցնում է մի փոքրիկ իրական դեպք և դրա հիման վրա հորինում,ավելացնում որոշ հանգամանքներ ու երևույթներ,այն ամբողջացնելով դարձնում շարադրություն:

Այս շարադրությունները սովորողին մղում են որոնողական-հետազոտական խթանելով նրանց մտային ակտիվ գործնեությունն ու ինքնուրույնությունը և նպաստում է բառապաշարի հարստացմանը:

Ահա այսպիսի շարադրությունների վերնագրեր են՝<<Բնության գրկում>>, <<<Հրաժեշտի պահին>>, <<Զվարճալի դեպք>> և այլն:

Ինչպես գրել ստեղծագործական շարադրություն

Ստեղծագործական շարադրությունները կարևոր դեր են խաղում աշակերտների գրավոր և բանավոր խոսքի զարգացման,նրանց գեղագիտական ճաշակի բարձրացման,խոսքի մշակույթի կատարելագործման գործում:

Նպատակին հասնելու համար պետք է հենվել հետևյալ
խնդիրների վրա.
•Երեխաների մոտ զարգացնել ստեղծագործելու կարողությունը

• Փորձարկել և խթանել երեխաների երևակայական ներուժը, որպես ունակությունների զարգացման գլխավոր գործոն:

Որպեսզի աշակերտները կարողանան իրենց մտքերը շարադրել,պետք է նրանց մեջ մշակել հետևյա կարողությունները.ինքնուրույնաբար ընտրել թեման,որոշել սահմանները և շարադրել:Ձևակերպել թեմայի գլխավոր միտքը:Կարողանալ ճիշտ ու գեղեցիկ արտահայտել մտքերը՝քերականական օրենքների ու գրական լեզվի բոլոր օրինաչափություններով:Աշակերտը պետք է վարժվի անկաշկանդ գրելու իր հետ կատարվածի մասին,պարզ,մատչելի ու հստակ շարադրի իր տեսածն ու լսածը,զգացածն ու ապրածը /ասենք՝ տրված նկարի բովանդակությունը,արշավից ստացած իր տպավորությունները՝ վերնագրելով՝ «Մի անգամ անտառում», «Մի դեպք իմ կյանքից», «Աշունը Երևանում»,«Մատենադարանի գանձերը» և այլն/ : Շարադրությունը գրելուց առաջ նախ՝ մտքում, ապա՝ համառոտ նշումներով անհրաժեշտ է հերթականորեն առանձնացնել թեմայի հիմնական ու մնացյալ հարցերը:Այնուհետև անհրաժեշտ է մտածել շարադրանքի կառույցի մասին՝ ինչպես սկսել և ինչպես ավարտել: Շարադրության մեջ դեպքերի ու դեմքերի թե՛ արտաքին նկարագրական,թե՛ներքին՝ հոգեբանական բնութագրումները ավելի տպավորիչ դարձնելու համար հոմանիշների բառարանից կարելի է դուրս գրել համապատասխան բառեր,ընտրել առավել դիպուկը, դարձվածների բառարանից դուրս գրել համապատասխան դարձվածներ և մի քանիսը օգտագործել:Պետք է տրվեն այնպիսի թեմաներ,որ աշակերտները կարողանան հիմնավորված եզրահանգումներ անել,պատկերավոր և գեղեցիկ նկարագրել:Աշակերտին պետք էներշնչել խուսափելու ձգձգված երկարաբանություններից,հիմնական թեմայի կատարվող անհարկի շեղումներից,որոնք խախտում են շարադրանքի ներքին տրամաբանությունը,երևույթների փոխադարձ կապը,ասելիքի ամբողջականությունը:

Դասի նմուշ օրինակ

Առարկա -Մայրենի

Դասարան- 5

Դասի թեման- Ստեղծագործական շարադրություն «Արարատ» բնանկարի շուրջ:
Դասի նպատակը-ա/Գրավոր կապակցվող խոսքի զարգացում
բ/Աշակերտների պատկերավորման մտածողության զարգացում
գ/գեղեցիկը, օգտակարը տեսնելու, ճաշակ ձևավորելու զարգացում

Հմտությունները զարգացնող նպատակներ՝

- ✓ գրավոր խոսքը միասին պլանավորելու, ծրագրելու և շարադրելու կարողությունների զարգացում
- ✓ համագործակցելու միջոցով իմացածն ընկերոջը հաղորդելու կարողությունների ձևավորում

Ուսումնական նյութեր՝

- ✓ ընտրված նկարի դիտարկում
- ✓ բանալի բառեր

Դասի ընթացքում օգտագործած մեթոդները՝ խմբային աշխատանք,
<<Քառաբաժան>>, <<Մտագրոհ>>

Միջառարկայական կապերը՝ կերպարվեստ, հայրենագիտություն:

Դասի ընթացքը

Դասն սկսվում է նկարի ցուցարումով:Աշակերտների հետաքրքրությունը շարժելու, ուշադրությունը կենտրոնացնելու համար ուսուցիչն առաջարկում է դիտել նկարը:

Գրատախտակին գրել բառեր ու բառակապակցություններ,որոնք վերաբերում են Արարատին (սպիտակափառ,բարձրաբերձ,հավերժական ձյուն,անհաս փառքի ճամփա ,ստորոտ,լանջ,կանաչ գորգ,բերրի,մրգառատ,դալար բարդի,ջինջ երկինք,արևի շողերով ողողված):

Նկարի բովանդակությունը վերարտադրելու համար տրվում է հետևյալ հարցերը.

1. Հայաստանի որ մասն է պատկերված նկարում:
2. Տարվա որ եղանակն է պատկերված:
3. Նկարագրել հեռանիստ Արարատը՝ օգտագործելով տրված բառերը:
4. Տրված բառերի օգտագործումով նկարագրել Արարատյան դաշտը:
   Այնուհետև աշակերտներն իրենց տպավորությունները լրացնում են գրատախտակին գծված քառաթև աղյուսակում

Ի՞նչ ենք տեսնում	Ի՞նչ ենք զգում	Ի՞նչ ենք լսում	Գեղեցիկը արվեստում, թե՞ բնության մեջ

Դասարանը բաժանել խմբերի և առաջարկել մտածել տրված հարցերի շուրջ:Աշակերտները նախ աշխատում են առանձին, հետո՝ միասին:Ապա խմբերից մեկական աշակերտ ներկայացնում են իրենց գրածը, հետո համատեղ ուժերով փորձում են գրել շարադրություն նկարի շուրջ:
Խմբերի շարադրությունները լսելուց հետո ուսուցիչն առաջարկում է մեկ անգամ ևս խմբագրել իրենց գրածը և արտագրել տետրերում:
Տնային աշխատանք՝ գրել համառոտ տեղեկություն Արարատ լեռան մասին:

Վերլուծական շարադրություն

Միջին դպրոցում աշակերտներին երբեմն կարելի է հանձնարարել իրենց կարդացած գրական տեքստը վերաշարադրել, երբեմն էլ՝ կարդացած նյութի <<հերոսին>> գրավոր բնութագրել:

Այս բնույթի շարադրությունների նպատակն է ստեղծագործական-վերլուծական կարողությունների զարգացումը, ինչպես նաև, որ շատ կարևոր է, սեփական դատողությունները գրական հայերենով անսխալ գրառելու հմտության ձեռք բերումը:

Վերլուծական շարադրությունների նյութը գրական երկերն են, սակայն դրանք սոսկ լեզվի ու գրականության ուսուցման միջոց չեն. դրանց օգտակարության շրջանակը շատ ավելի լայն է, քանի որ օգնում են աշակերտին՝ հստակ ու որոշակի կառույցով ձևակերպելու և շարադրելու իր մտածածը:

Ինչպես գրել վերլուծական շարադրություն

Գրական որևէ թեմայով /որևէ գրողի ամբողջ կամ ոևէ գործի, մեկ կամ մի քանի կերպարների մասին/ վերլուծական շարադրություն գրելիս վերլուծությունը պետք է կատարել փաստական նյութի հիման վրա՝ տեղեկատվություն – վերլուծություն – արժեքավորում ընթացքով:Վերլուծական շարադրությունները գրվում են որևէ գրողի ստեղծագործության կամ ստեղծագործությունների վերաբերյալ: Կարող են լինել նաև համեմատական բնույթի շարադրություններ, որոնցում զուգադրվում ու վերլուծվում ենտարբեր գրողների (կամ միևնույն գրողի) այնպիսի ստեղծագործություններ, որոնքգաղափարական ընդհանրություններ ունեն (օրինակ՝ երկուսում էլ ներկայացվածէ հայրենիքի թեման): Ավելի հաճախ շարադրությունները նվիրված են լինում ոչ թե ամբողջ ստեղծագործության վերլուծությանը, այլ որևէ կոնկրետ հարցի քննությանը (օրինակ՝ գլխավոր կերպարի վերլուծությանը): Այսպես՝ հայ նշանավոր արձակագիր Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի վերաբերյալ կարող են գրվելվերլուծական տարբեր շարադրություններ՝ «Գևորգ Մարզպետունու կերպարը»,«Պատմականությունը Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպում», «Մուրա-ցանի աշխարհայացքի դրսևորումը «Գևորգ Մարզպետունի» վեպում» և այլն: Վերլուծական շարադրության նյութն առաջին հերթին գրական այն երկն է,որի վերաբերյալ պետք է գրվի շարադրությունը, սակայն անհրաժեշտ է նաև այլնյութերի իմացություն: Շարադրություն գրողը պետք է ծանոթ լինի նաև տվյալհեղինակի ուրիշ գործերի, պատկերացում ունենա այն ժամանակաշրջանի մասին,որի ընթացքում ապրել և ստեղծագործել է հեղինակը, իմանա գրական այնուղղության առանձնահատկությունները, որի ներկայացուցիչն է հեղինակը(ռոմանտիզմ, ռեալիզմ, սիմվոլիզմ և այլն):

Առարկան՝ Հայ գրականություն

Դասարանը՝ XII

Թեման՝ Հրանտ Մաթևոսյան, կյանքը և ստեղծագործությունը (ամփոփում)

Նպատակները՝

1.Առարկայական (ակադեմիական)

Աշակերտը կիմանա՝

ա. Մանրամասներ Հր. Մաթևոսյանի կյանքից

բ.ստեղծագործության մոտիվները, վերնագրերը,դիպաշարերը

գ.գնահատանք Հր. Մաթևոսյանի ստեղծագործությանը:

Աշակերտը կկարողանա՝

ա. Ներկայացնել ստեղծագործության գաղափարը

բ. Վերլուծել կերպարները,արտահայտել կարծիք, կատարել դատողություններ

գ.արժևորել ստեղծագործությունը

Ուսումնական նյութերը՝ դասագիրք, նկարներ, վիպակը, ասույթներ

Կիրառվող մեթոդները՝ «խմբային»,« հետազոտական աշխատանք», «քննարկում»:

Դասի ընթացքը՝ կիրառվում է ԽԻԿ համակարգը:

Նախօրոք դասասենյակի պատին փակցվել են Հր. Մաթևոսյանի նկարները և ասույթները:

Խթանման փուլ- դասն սկսվում է փակցված ասույթների ընթերցումով:Այնուհետև դասարանը բաժանվում է 5 խմբի՝ ըստ թեմաների ընտրովի տարբերակով:

1 խումբ- Հր. Մաթևսյանի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը

2 խումբ- Պատմվածքները:

3 խումբ- Խոսքի և պատումի առանձնահատկությունները

4 խումբ- վիպակը, սյուժեն, գաղափարը

5 խումբ- վիպակի կերպարները

/Խմբերի բաժանումը և պատասխանելուն նախապատրաստվելը տևում է 5 րոպե/

Իմաստավորման փուլ- Խմբերը ներկայացնում են իրենց գիտելիքները, դատողությունները:/Յուրաքանչյուր խմբին տրվում է 5 րոպե, ընդհամենը 25 րոպե/:

1խումբը խոսում է գրողի կյանքի, ապրած ժամանակաշրջանի , ծննդավայրի մասին, կարդում հուշեր նրա կյանքից, խոսում ստեղծագործական ուղու մասին, հիշում 1-ին երկը, դրա արձագանքը գրական աշխարհում:

Պաստառի վրա գրվում է Մաթևոսյանի կյանքի և ստեղծագործության ժամանակագրությունը:

2 խումբը ներկայացնում է Մաթևոսյանի պատմվածքները, դրանց դրամատիկան, խոսում և պատմվածքների մասին, շեշտում գյուղ-քաղաք հակադրությունը, ներկայացնում Մաթևոսյանի կողմնորոշումը տվյալ հակադրության հանդեպ, կատարում սեփական կողմնորոշման դատողություններ:

3 խումբը ներկայացնում է Մաթևոսյանի խոսքի և պատումի առանձնահատկությունները, հերոսների բնավորության բացահայտումը սեփական խոսքի միջոցով, նկարագրությունների բացակայությունը, բայց դրանց գիտակցումն ու զգացողությունը երկն ընթերցելիս: Նրա պատմելաոճն համեմատվում է Հ.Թումանյանի , Ալ. Շիրվանզադեի պատմելաոճի հետ:

4 խումբը ներկայացնում է վիպակը, դրա վերնագրային տեսակները,սյուժեն,թեման, գաղափարը, գրելու ոճը, հոգեբանական բացահայտումները :

5 խումբը խոսում է առնցքային կերպարների մասին, վերլուծում դրանք: Գրատախտակին գրվում են հերոսների անունները՝ Աղուն, Սիմոն, Արուս, Արմենակ, Սերո, Սոնա: Խմբի անդամները վերլուծում են կերպարները, նշում դրանց դրական և բացասական կողմերը, հայտնում իրենց կարծիքը:

Ավարտվում է խմբային աշխատանքը:

Կշռադատման փուլ- /տևում է 10 րոպե/: Գրատախտակին գծվում է ՝ և հակադրումով: Աշակերտները նախ արտահայտում են իրենց կարծիքները վերնագրերի շուրջը , ապա լրացնում աղյուսակը:

Աղուն	Սիմոն
Ռուստոմ	Արուս
Ալխո	Նարինջ զամբիկ

Գրատախտակին գրվում է բանավեճի թեման. : Աշակերտները արտահայտում են իրենց կարծիքները, արդիականացնում թեման, խոսում 21-րդ դարի Աղունների և Սիմոնների մասին:

Գրատախտակի մեջտեղում գրվում է **Աղուն** բառը: Աշակերտները մտագրոհ մեթոդով բնորոշում են հերոսուհուն:

Անդրադարձ- / 5 րոպե/:

Խմբերը գնահատվում են 3 չափանիշներով.

1. Ըստ գիտելիքների
2. Ըստ խոսքի ճիշտ ու գեղեցիկ կառուցման
3. Ըստ մյուս խմբերի հանդեպ ցուցաբերած հարգանքի:

Տնային աշխատանք ՝ գրել շարադրություն բնութագրելով Հր. Մաթևոսյանի վիպակի հերոսներից որևէ մեկին:

Թվանշանային գնահատում չեմ կատարել, այլ մշակել եմ աշակերտների շարադրություն գրելու կարողությունները ձևավորող գնահատման համակարգ, որոշակի բնութագրիչներով ՝ բարձր, միջին, ցածր:

Բարձր (9-10)	Երբ բացահայտված են թեման և գլխավոր միտքը,բովանդակությունը համապատասխանում է վերնագրին,մտքերը շարադրված են տրամաբանորեն,օգտագործված են գեղարվեստական խոսքի պատկերավորման որոշ արտահայտչամիջոցները:
Միջին (7-8)	Երբ բացահայտված են թեման և գլխավոր միտքը:Մտքերը շարադրված են տրամաբանական հարթրդականությամբ,սակայն կան խոսքային անճշտություններ,բառօգտագործման սխալներ:
Ցածր (4-6)	Երբ մասամբ է բացահայտված թեման,կան սխալ բառօգտագործման դեպքեր,ոճական խախտումներ,բառապաշարն աղքատ է:

Առաջադրանքի ստուգումից հետո պարզ դարձավ, որ շարադրության արդյունքները դրական են, նրանց կապակցված խոսքը զարգացած էր; Աշակերտները հանգամանորեն ուսումնասիրել էին հեղինակի կյանքն ու ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը: Արդյունքները ներկայացրել եմ տրամագրի տեսքով:



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ:ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ՄԵԹՈԴԻԿԱ

2.1 Գաղափար փոխադրության մասին

Գրավոր խոսքի միջոցով,զարգացնում ենք աշակերտների բանավոր խոսքը:Գրավորի հիմնական տեսակներից `փոխադրությունը հենց խթան է հանդիսանում աշակերտի բանավոր խոսքի զարգացման հարցում:Երբ աշակերտը կենտրոնանում է նախ լսելու,հետո վերլուծելու և այն վերարտադրելու ուղղությամբ,որից հետո էլ այն պետք հանձնի մաքուր թղթին:Խոսքի համակողմանի զարգացման այս միջոցը ,աշակերտին տալիս է ստեղծաղծագործելու հնարավորություն,թեմայի բովանդակությունից չշեղվելով: Փոխադրության նպատակը հիշողության զարգացումն է տեքստը քերականորեն ճիշտ շարադրելու միջոցով:Գրավորի այս տեսակը հարստացնում է աշակերտի խոսքը: Միաժամանակ այս ճանապարհով նա գրողից կարծես թե վերցնում է խոսք կառուցելու դասեր:Փոխադրության բնագիրը հարուստ պիտի լինի լեզվական արտահայտչական միջոցներով,բառապաշարով:Փոխադրության բնագիրը պիտի հուզի աշակերտին թե՛ արվեստով,թե՛ արտահայտած գաղափարով:

Ինչպես գրել փոխադրություն

Ուսուցիչները շատ մեծ ուշադրություն պիտի դարձնեն գրավորի այս տեսակի ճիշտ մատուցմանն ու անցկացմանը:Ուսուցիչը պիտի աստիճանաբար աշակերտների պասիվ վերարտադրական փոխադրության ունակությունը հետզհետե վերափոխի ակտիվ վերարտադրականի:Որքան էլ որ ունկնդրած նյութի բովանդակությունը փոխադրելիս կարևորվում է աշակերտի ինքնուրույն խոսքը, այնուամենայնիվ, պիտի աշխատանք տանել, որ աշակերտը որոշ հեղինակային բառեր, արտահայտություններ, մտքեր վերարտադրի՝ հարազատ մնալով հեղինակի ոճին և լեզվին: Բնագրի շուրջ տարվող մեթոդապես ճիշտ աշխատանքի միջոցով դրանք կդառնան աշակերտներինը՝ սերմանելով ստեղծագործական գործունեության տարրեր: Որքան էլ փոխադրություն գրելիս տեղ տրվի երեխաների ստեղծագործական մտքին և վերլուծական մտածողությանը, այնուամենայնիվ, աշակերտները պետք է տրված խոսքի նմուշից օգտագործեն այն բառերը, արտահայտությունները, որոնք աշակերտներն հանդիպում են առաջին անգամ, որպեսզի պահպանվեն ստեղծագործության իմաստային առանձնահատկությունները, և աշակերտների խոսքը հարստանա դրանցով:

Փոխադրության ժամանակ կարելի է լրացուցիչ առաջադրանք տալ,նայած թե տվյալ դեպքում քերականությունից ինչ են սովորում.եթե մակբայ են սովորում,կարելի է մակբայների ցանկ տալ և պահանջել,որ օգտագործեն,կարելի է պահանջել փոխեն բայի ժամանակները,ուրիշի ուղղակի խոսքը պահպանեն կամ փոխեն անուղղակի խոսքի:

Փոխադրության դասը կարող է ունենալ հետևյալ հիմնական բաղադրամասերը.

1. Նախապատրաստական աշխատանք կամ համառոտ զրույց:
2. Բնագրի ընթերցում ուսուցչի կողմից:
3. Զրույց ընթերցած բնագրի բովանդակության շուրջ:
4. Փոխադրության պլանի կազմում կամ պատրաստի պլանի առաջադրում:
5. Բառային կամ ուղղագրական աշխատանք:
6. Բնագրի բովանդակության բանավոր վերարտադրում կամ կրկնաընթերցում:
7. Գրածի ինքնաստուգում:
8. Աշխատանքների հավաքում:

2.2 Փոխադրության տեսակները

Փոխադրությունները լինում են ուսուցանող և թեմատիկ:

- ✓ **Ուսուցանող փոխադրութուն**

Ուսուցիչը նախօրոք տանն ընտրում է փոխադրության նյութը, տեղեկանում գրողի կյանքի և գործի մասին, իր աշխատանքային տետրում դուրս է գրում անծանոթ բառերը, բառարանով գտնում դրանց բացատրությունը կամ հոմանիշները:Եթե առաջարկվում է լսել երաժշտություն կամ ցուցադրել որևէ կտավի վերատպություն,դրանք ևս պատրաստում է և այդպես ներկայանում դասարան:
Ուսուցիչը գրատախտակին գրում է փոխադրության վերնագիրը:Աշակերտներին խնդրում է պատրաստել սևագրության տետր և գրիչ:Նպատակահարմար չէ փոխադրությունը միանգամից գրել տետրերում, որովհետև նախ՝ երեխային զրկում ենք իր գրածը մշակելու հնարավորությունից,ապա՝ նրան վարժեցնում ենք անփույթ ու ջնջումներով գրելուն:
Այնուհետև ուսուցիչը մեկ-երկու բառով ներկայացնում է տվյալ հեղինակին:Իսկ եթե նախօրոք հանձնարարել է որևէ աշակերտի հաղորդումով հանդես գալ, ապա լսում են նրան:Հետո ուսուցիչը արտահայտիչ և գեղեցիկ կարդում է բնագիրը:Կարդալուց հետո տեղեկանում է՝ նյութը դուր եկա՞վ աշակերտներին կամ ինչ հասկացան:Բացատրում է բոլոր անծանոթ բառերը՝ գրել տալով բառատետրում:
Հաջորդ փուլը խմբովին հարցաշար կազմելն է:Ողջ դասարանով կազմում են հարցաշար և գրում գրատախտակին:Ուսուցիչը բնագիրը կարդում է երկրորդ անգամ,որից հետո գրատախտակին գրում են օգնող բառեր և բառակապակցություններ,նշվում է այս կամ այն բառի հոմանիշը կամ համարժեք դարձվածքը:Ապա ըստ հարցաշարի կետերի, օգտագործելով սովորած բառերն ու բառակապակցությունները,բանավոր վերարտադրում են նյութի բովանդակությունը:Ուսուցիչն այս աշխատանքին մասնակից է դարձնում բոլոր աշակերտներին:<<Դու ի՞նչ կասես, դու ինչպե՞ս կպատմես այս հատվածը>>-հաճախ դիմում է ուսուցիչը աշակերտներին:
Հատված-հատված պատմելուց հետո ուսուցիչը երկու կամ երեք աշակերտի խնդրում է պատմել ողջ նյութը՝ գործածելով անհրաժեշտ բառերն ու բառակապակցությունները:
Այնուհետև սկսվում է ինքնուրույն աշխատանքի փուլը:Աշակերտներն սկսում

են աշխատել սևագրության տետրերում: Եթե սևագրության մեջ աշխատանքն ավարտվում է, ուսուցիչն առաջարկում է աշակերտին մտքում կարդալ գրածը, ստուգել, ապա թույլ է տալիս արտագրել ուսուցողական աշխատանքի տետրում:

Թեմատիկ փոխադրություն

Թեմատիկ փոխադրության ժամանակ ուսուցիչն աշխատում է քիչ միջամտել, հարցաշար, օգնող բառեր, բառակապակցություններ չտալ:Իսկ եթե ցածր դասարան է, կամ աշակերտները դեռևս ինքնուրույն գրելու փորձառություն չունեն, ուսուցիչը կարող է օգնել կազմելու հարցաշար, մեկ-երկու աշակերտի կազմել է տալիս և ապա հանձնարարում սևագրել, ստուգել գրածը և արտագրել տետրերում:

- ✓ **Ստեղծագործական փոխադրություն**

Ուսուցիչը վերնագրի տակ նշում է տեսակը, կարդում է փոխադրության նյութի տրված հատվածը, ապա հանձնարարում, որ աշակերտները ստեղծագործեն ու հորինեն շարունակություն և ավարտ:Լավ կլինի, որ ուսուցիչը չկասեցնի աշակերտի երևակայության թռիչքը, չվախենա առանձին աշակերտների՝ առաջին հայացքից անհեթեթ թվացող հորինվածքներից: Հաճախ մյուս աշակերտներն էլ խիստ ոգևորվում են իրենց ընկերոջ գյուտից և փորձում նրան գերազանցել:Եթե դասարանը դեռ սովոր չէ այսպիսի աշխատանքի, կարելի է խմբովին հորինել. Մի աշակերտ մի միտք է տալիս, մյուսը շարունակում է, երրորդը՝ լրացնում և այլն: Այս դեպքում, քանի որ ուսուցիչը հարցաշար, օգնող բառեր և բառակապակցություններ չի տալիս, աշակերտներին առաջարկում է իրենց մտքերը հղկել, հարստացնել անհրաժեշտ բառերով, պատկերավոր արտահայտություններով:

- ✓ **Անավարտ փոխադրություն**

Ուսուցիչը կարդում է այսպիսի նշում ունեցող փոխադրության բնագիրը և աշակերտներին հանձնարարում գտնել համապատասխան վերջաբան:Լավ կլինի,որ ավարտը լինի հանկարծակի, անսպասելի և սրամիտ:

- ✓ **Ստեղծագործական հավելումներով փոխադրություն**

Նյութը վերնագիր չունի, չի տրվում հարցաշար, չկան առաջադրանքներ:Բնագիրն ամբողջական չէ, տրված է ընդհատումներով:Աշակերտն ուսուցչի օգնությամբ ընտրում է վերնագիր, փորձում է յուրովի,ստեղծագործաբար լրացնել բնագրի բաց թողնված հատվածները:

- ✓ **Անվերնագիր փոխադրություն**

Վերնագիրը չի տրվում.տրվում է ողջ բնագիրը,վերջում՝ պլան և առաւադրանքներ:Ուսուցիչը կարդում է բնագիրը և աշակերտներին առաջարկում գտնել համապատասխան վերնագիր:Այստեղ ևս ուսուցիչն աշխատում է զարգացնել աշակերտների մտածողության ինքնատիպությունը և նախաձեռնելու կարողությունը:

- ✓ **Ստեղծագործական մուտքով փոխադրություն**

Բնագիրն ունի վերնագիր, սակայն բացակայում է մուտքը:Նյութը շարադրված է առանց անհրաժեշտ սկզբի:Այս դեպքում էլ աշակերտը հորինում, ընտրում է համապատասխան մուտքը, որը բխելու է տրված բնագրի բովանդակությունից:

- ✓ **Ինքնուրույն հանգուցալուծումով փոխադրություն**

Բնագիրը շարադրված է մինչև դեպքերի զ զարգացման գագաթնակետ, իսկ հանգուցալուծումը պիտի տա աշակերտը;Այստեղ պլանի մի քանի կետ տրվում է,մյուս մեկ-երկու կետերը ամեն աշակերտ ինքն է ավելացնում՝ելնելով իր իսկ հանգուցալուծումից:

- ✓ **Գրական դատ-փոխադրություն**

Այսպիսի փոխադրությանը նախորդում է տվյալ թեմայով անցկացվող գրական դատը:Ուսուցիչը դասարանում կարդում է բնագիրը:Ապա ընտրում են դատավոր,դատապաշտպան, մեղադրող, վկաներ և այլն:Կազմակերպվում է դատ, գրական-դատ:Հաջորդ օրը աշակերտները շարադրում են նյութը՝ ըստ այդ գրական-դատի:Աշակերտների շարադրանքի մեջ տեղ կգտնեն իքնուրույն դատողություններ,վերլուծություններ, հերոսների բնութագրումներ և այլն:

- ✓ **Դատողական-ստեղծագործական փոխադրություն**

Ուսուցչի՝ նյութը կարդալուց հետո աշակերտները բանավոր վերարտադրում ենբովանդակությունը՝նշելով միայն դեպքերի և գործողությունների զարգացման ընթացքը:Իսկ հետո արդեն ինքնուրույն՝ աշակերտը շարադրանքի մեջ ներմուծում է նաև իր դատողությունները այս կամ այն հերոսի որևէ արարքի կամ տվյալ երևույթի,անցքի վերաբերյալ:Այսինքն՝ աշակերտը դատում է և շարադրում իր տեսակետները տվյալ հարցի շուրջ:

Փոխադրությունը կիրառում ենք ոչ միայն լեզվի, այլև գրականության ժամերին: Այսպիսի աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին սովորեցնելու համառոտ ներկայացնել անցած գրական ստեղծագործությունը, վերապատմել կամ վերաշարադրել այն, հատկապես ավելի լավ հասկանալ չափածո ստեղծագործության ասելիքն ու պատկերային համակարգը:

Օրինակ՝ 7-րդ դասարանում Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը անցնելուց հետո գրում ենք համառոտ փոխադրություն, որտեղ աշակերտները սովորում են նյութի բովանդակությունը ներկայացնել՝ կարևորելով հիմնականը: Կամ նույն 7-րդ դասարանում մեկնողական փոխադրություն ենք գրում Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի…» բանաստեղծությունից: Այսպիսի աշխատանքը հնարավորություն է տալիս զարգացնելու և բացահայտելու աշակերտների՝ անգիր սովորածը նաև սեփական տեսանկյունով ներկայացնելու, մեկնաբանելու կարողությունը:

Այսպիսով, փոխադրությունը կիրառելով նաև գրականության ժամերին, ստանում ենք ևս մեկ արդյունավետ գործիք հայոց լեզվի և գրականության ուսուցումը առավել արդյունավետ իրականացնելու համար:

Դասի նմուշ օրինակ

Ներկայացնենք փոխադրության դասի մի օրինակ

Դասարան՝ 5

Առարկա՝ Մայրենի

Դասի տեսակը՝ Գրավոր (մանրամասն փոխադրություն)

Թեմայի վերնագիրը՝ «Միայն մի մարդ»

Դասի նպատակներն ու խնդիրները՝

- ✓ Կապակցված խոսքի կարողության ձևավորում:
- ✓ Կարևորել և կապակցված խոսքով արտահայտել իրենց վերաբերմունքը մարդկային դրական որակների ու արարքների վերաբերյալ:
- ✓ Ձևավորել աշակերտների՝ ընկալման և վերարտադրության համար անհրաժեշտ խոսքային-հաղորդակցական կարողությունները:
- ✓ Աշակերտների մոտ կկանխվեն խոսքային ուղղագրական սխալները:
- ✓ Հասկանալով վերարտադրել բնագրի բովանդակությունը:

Դասի տևողությունը՝ 2 դասաժամ

Դասի ընթացքը՝ ԽԻԿ համակարգ

Կազմակերպական պահ

Խթանման փուլ Նախապատրաստական զրույց փոխադրության տեքստի շարադրմանը ներկայացվող պահանջների մասին:

Իմաստի ընկալման փուլ Բնագրի ընթերցում ուսուցչի կողմից 2 անգամ:
Կատարել զրույց-քննարկում ընթերցած բնագրի բովանդակության շուրջ: Փոխադրության պատրաստի պլանի առաջադրում:

Կշռադատման փուլ

Լեզվական աշխատանք՝

- Ուղղագրական արժեք ներկայացվող բառեր ուղղությամբ
- Մեջբերվող ուղղակի խոսքի ձևավորման հարցում
- Բարդ նախադասությունների գործածության շուրջ:

Բնագրի շարադրում ըստ կազմած պլանի:

Բնագրի գրառում:

Կատարել ինքնաստուգում:

Գրավոր աշխատանքների հանձնում:



Ամփոփելով հետազոտության ընթացքում իրականացրած իմ աշխատանքները հինգերորդ դասարանում՝ կարող եմ ընդհանրացնել տվյալները և նշել, որ ես հասել եմ իմ առջև դրված նպատակին, քանի որ գրանցվեց դրական տեղաշարժ գիտելիքների բարձր մակարդակ 50%, միջին մակարդակ 30%, ցածր մակարդակ 20%: Հայտորոշիչի տվյալներով ունեին հետևյալ պատկերը՝ գիտելիքների բարձր մակարդակ 40%, միջին մակարդակ 20%, ցածր մակարդակ 40%: Կարծում ենք՝ արդյունքն արդեն ակնհայտ է:

Այսպիսով, այս և նմանատիպ շատ աշխատանքների միջոցով հնարավոր է որոշ չափով հաղթահարել նախ՝ տեքստի բովանդակության ընկալումն ու մտապահումը,այնուհետև՝ վերարտադրումնու գրավոր փոխադրումը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ: ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆ ՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ:

Ստուգման ու քննարկման ընթացքում տեղի են ունենում սխալների բացահայտում,ուղղում, ինչպես նաև դրանց ունեցած արժանիքների վերհանում,դրական կողմերի մատնանշում և ամրակայում,աշակերտների խոսքի զարգացում:

Շարադրությունն ու փոխադրությունը պիտի ստուգել երկու օրվա ընթացքում,հակառակ դեպքում աշակերտները կարող են մոռանալ շարադրության առանձին դրվագներ,մանրամասները,բառապաշարը.այդ դեպքում գրավորների արդյունքների քննարկումը,սխալների ուղղման կազմակերպումը կդառնա անարդյունավետ,ձևական:

Ստուգման ժամանակ նշվում, ուղղվում ու խմբավորվում են բոլոր սխալները:Թեպետ դրանք շատ բազմազան են լինում, բայց պայմանականորեն կարելի է բաժանել երկու կարգի՝ բովանդակությանը և նրա լեզվին վերաբերող սխալներին:

Շարադրությունն ու փոխադրությունը ստուգելիս և գնահատելիս պիտի կարևորել.

ա)շարադրության թեմայի բացահայտումը, բովանդակության համապատասխանությունը վերնագրին.
բ) եթե նախագծով է գրվել՝ կարևորել համապատասխանությունը նախագծին. կարևորել մտքերի հետևողականությունն ու տրամաբանությունը.
գ) գլխավոր մտքի առկայությունը, դրա հստակությունը.
դ) բնագրի ոճը.
ե) ծավալը.
զ) հոմանիշների, հականիշների, դարձվածքների օգտագործումը.
է) շարահյուսական կառուցվածքը (նախադասությունների ընդարձակությունը, խորիմաստ մտքերի, կարողությունների առկայությունը).
ը) ուղղագրական և կետադրական գրագիտությունը.
թ) գեղագրությունը:

Շարադրությունների ու փոխադրությունների մեջ թույլ տված սխալների ուղղման գործընթացի մեթոդական շղթան.

ա) Աշակերտների՝ տետրերում թույլ տված սխալների ուղղում:
բ) Սխալների դասակարգում, պատճառների որոշում:
գ) Համադասարանային աշխատանք տիպային սխալների շուրջ:
դ) Թույլ տված սխալների շուրջ տարաբնույթ վարժությունների կատարում:
ե) Շարադրությունների և փոխադրությունների ինքնաստուգում և ինքնախմբագրման ունակությունների ձևավորում:

Եզրակացություն

Իմ կատարած հետազոտության նպատակն էր ներկայացնել շարադրության ու փոխադրության տեսակները, նրա պլանավորման և անցկացման սկզբունքները՝ կարևորելով փոխադրությունը՝ որպես գրավոր աշխատանքի տեսակ: Փորձել եմ ներկայացնել հնարավորինս շատ տեսակներ և առաջարկել եմշարադրությունն ու փոխադրությունը կիրառել նաև գրականության ժամերին, ինչը հնարավորություն կտա լավագույնս հասկանալու գրական ստեղծագործությունը, նրա սյուժեն, կառուցվածքը, գաղափարը և այլն:

Հուսով եմ, որ աշխատանքը օգտակար կլինի հայոց լեզվի և գրականության ուսուցիչների համար, և փոխադրության ու շարադրության՝ առաջարկած կիրառությունները ևս կնպաստեն հայոց լեզվի և գրականության ուսուցման արդյունավետությունը փոքր- ինչ բարձրացնելուն:

Օգտագործված գրականության ցանկ

1.Վազգեն Գաբրիելյան -Գրավոր խոսք, Երևան 2012
2.Ա. Վ. Գրիգորյան-Ստեղծագործական շարադրությունների ուսուցման հարցեր, Երևան 1984
3.Ռ. Նազարյան, Թ. Ալեքսանյան-Փոխադրության նյութերրի ժողովածու, Երևան 2000
4.Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա,Երևան, «Զանգակ», 2015:
5.«Հայոց լեզու և գրականություն» ամսագիր 2015,թիվ 3 (104)
6.Ս.Վ.Գյուլբուդաղյան –Հայոց լեզվի մեթոդիկա,Երևան 1978